



Ս Փ Յ Ո Ւ Ք Ո Ւ Մ

ՍԻՐՈ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

(Առաջնորդ ճայոց Ամերիկայի)

ՍՐԾԱԳԻՆ ԿՈՉ ՄԵՐ ԹԵՄԻ ՍԻՐԵՑՅԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ*

Եկեղեցաշխությունը հայ ժողովուրդի առաքինի հատկանիշներն մին է։ Շինարար է մեր ժողովուրդը և ստեղծագործող. ուր որ գացեր է՝ շիներ է գեղեցիկ եկեղեցիներ, մշակովային շենքեր և դպրոցներ, իսկ Հայրենիքին մեջ կառուցեր է աննման կոթողներ, հայ ճարտարապետության ինքնատիպ ոճով և կաթողիկե գմբեթով Հոյակերտ տաճարներ՝ նման Զվարթնոցի, Անիի և Ս. Էջմիածնի Մայր Տաճարներուն։ Եթե ուրիշ հին աղքեր իրենց պալատներով և բուրգերով կպարծենան, Հայ Ազգը իր վանքերով ու եկեղեցիներով կրնա պարծենալ, որոնք եղած են ոչ միայն հավատքի տաճարներ ու լուսի խորաններ, այլ նաև հայ մշակույթի ու կըր-

թության վառարաններ և իր գոյության անսասան ամրոցներ։

Հայ մշակույթի ամեննեն կարկառուն ճյուղերն են հայ ճարտարապետությունն ու հայ երաժշտությունը, որոնք կրոնական դրոշմ ունին։ Մեր մշակույթի ամեննեն ուշագրավ կոթողը Հայ եկեղեցին է՝ իր կաթողիկե գմբեթով և ուղղաձիգ ու երկնամերձ կառուցով, իրոն կանգուն և կինդանի վկան Հայ արվեստին։

Գաղթաշխարհի մեջ հայուն առաջին գործ եղած է միշտ շինել հայ եկեղեցին ու հայ դպրոցը՝ ճավատքի ու մշակույթի զույգ տաճարները, որոնցմե առաջիննին մեջ կվառի կուսավորչի կանթեղը և երկրորդին մեջ՝ Ս. Մեսրոպի շահուածությունը։

Վերջին քառորդ դարու ընթացքին, Ամերիկայի մեջ բազմաթիվ եկեղեցիներ կառուցվեր են, իսկ Հարավային Ամերիկայի հայությունը կանգնած է երկու հոյակապ տաճարներ, մին Բուենոս-Այրեսի, և մյուս՝ Սան Պավույի մեջ։

Ամերիկայի հայության տարիներու երազը եղած է նյու-Յորքի մեջ կանգնել Մայր Տաճարը և Մշակութային կեդրոնը։ Ուրախ ենք, որ առաջնորդարանի գեղեցիկ շենքը արդեն իսկ ավարտած է՝ Ցիսրաքեքիրյան Մարգիս և Հովհաննես եղբարց իշխանական

* Առանձին գոհունակությամբ արձագանքում ենք ԱՄՆ-ի Հայոց բարեխնամ առաջնորդ Տ. Սիրոն արքեպիսկոպոսի և թեմի աղքային-եկեղեցական մարմինների ընդհանրապես ազգօգուտ և եկեղեցաշեն գործունեությանը և մանավանդ վերշին տարիներին կատարված եկեղեցաշխությանը։ Վերջերս Նյու-Յորքում ավարտվել է նոր առաջնորդարանի կառուցումը, իսկ շուտով կակավեն հայկական ոճով և կաթողիկե գմբեթով Նյու-Յորքում Մայր Տաճարի և Մշակութային կենտրոնի կառուցման աշխատանքները, որոնք վառ վկայություն են Ամերիկայի հայության եկեղեցամասության և հայ մշակույթի հանդեպ շերժ գործութանքի՝ հՄՐ. ՇեքՄԻԱ. ՄԻՆԱ ԱՄՍԱԳՐԻ.

նվիրատվությամբ, որոնք համար – մեր և պատվարժան թեմական խորհուրդի կողմէ հՀայտնենք սրտագին գնահատանք ու շնորհակալություն:

Նույնքան ուրախալի է, որ Մայր Տաճարի և Մշակութային կեդրոնի շինության ընդհանուր վարիչ և գանձապահ տիար Հայկ Գավուգյանի անձնվեր ջանքերուն շնորհավ՝ Կյուզապի Կյուզաբնկյան հիմնադրամնեն կես միիրոն դոլար խոստացված է Մշակութային կեդրոնի կառուցման համար, որ շուտով պիտի սկսի:

Արդ, կմնա այս ծրագրին ամենեն կարուր և սրբազն կոթողը՝ Մայր Տաճարի շենքը, որ իր հայկական ճարտարապետական ինքնատիպ ոճով ու կաթողիկե գմբեթով պիտի ըլլա հավերժական ու պատվարեր խորհրդանշանը հայ մշակութին ու պարծանքը մեր նոր սերումդին: Մայր Տաճարը իր սրբազն կամարներուն տակ պիտի համախմբ մեր սիրատոն զավակները, և անոր սեղանին վրա մշտավառ պիտի պլայլա լուսավորչի կանթեղը և իր լույսով լուսավորե մեր զավակներուն լուսակարու հոգին:

Ահա այս սրբազն նպատակին համար է, որ կող կուղղվի մեր թեմի բովանդակ հայության անխտիր, որպեսզի սրտարուի և ա-

ռատածեռն նվիրատվություններով իրականացնեն այս նվիրական ծրագիրը:

Մայր Տաճարի շինության հանձնաժողովը, գիտավորությամբ իր անձնվեր ու պատվական ղեկավարին՝ տիար Հայկ Գավուգյանի, նոր ծրագրով ու հավատքով գործի սկսած է, մեկ միլիոն դոլարի հանգանակության արշավով մը գլուխ հանելու համար այս անհետածգելի գործի:

Ուստի, այսու, սրտագինս հրավեր կուղենք մեր բարեպաշտ ու զո՞րաբերող ժողովուրդին, որպեսզի անվերապահ սիրով տա իր լուսան և իշխանական նվերը այս աստվածանձո գործին հաջողության համար:

«Եկայք շինեցուք սուրբ գիորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

Կօրհնենք Մայր Տաճարի և Մշակութային կեդրոնի պատվարժան հանձնաժողովի բոլոր ծրաշան անդամները և մեր թեմի հավատացյալ ժողովուրդը՝ մաղթելով ամենուն Աստուծոյ վարձատրությունը:

(ՆՅՈՒՅՈՒՆ, Ամերիկայի հայոց առաջնորդարանի պաշտոնարերը «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՅԱ» եկեղեցի» ամսագիր, № 9, հոկտեմբեր, 1959 թ.)

